

ՍԱՌԱՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈԴԵՄԻԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

Հ Ո Ղ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ս Ե Կ Տ Ո Ր

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՊՈՓՈՒՅԱՐ ՍԵՐԻԱ.

Ա. Ա. ՌԱԶԱՎԵԼՅԱՆ

Կ Ո Ր Ե Կ

ԱՐՄԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1 9 4 3



ՍԱՄԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ՀՈՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ԲԱՐՁՐԱԳԻՏ ԳԻՏԱ-ՊՈՓՈՒՅՑԱՐ ՄԵՐՔԱՅ

633.17


ԱՅՈՒԳՎԱՌ Է 1961 թ.

Ա. Ա. ՌԱԶԱՐԵԼՅԱՆ

ԿՈՐԵԿ

A ~~4562~~

~~5562~~



ԱՐՄԵՆԻԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1943

**ՍԵՐԻԱ՝ ԽԱՄԲԱԳՐՈՒԹՅԱՄՔ**  
**ԴԻՏՈՒՐ. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՀ**  
**Ա. Պ. ԱՐՍ.ՐԱ.ՏԵՍ.Ն.Ի.**

**Պատ. ԽԱՄԲԱԳԻՐ՝**  
**ԴԻՏՈՒՐ. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՀ**  
**Գ. Խ. Ա.ԴԱ.ԶԱ.ՆԵՍ.Ն.**

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Կորեկը հնագույն կուլտուրաներից մեկն է։ Հեռու անցյալում կորեկը համարվում էր Եվրոպայի և Ասիայի ժողովուրդների հիմնական սննդամթերքը։

Կորեկը կարենորագույն պարենային կուլտուրաներից է։ Այն մշակվում է գլխավորապես կրուպա (հատիկ) ստանալու համար։ Վերջինս լավ է եփվում և զործ է ածվում նաև հրուշակեղենի արտադրության մեջ։

Կորեկը լայն գործածություն ունի անասնապահության մեջ, հաճախ այն ցանում են հատկապես կանաչ կերի համար։ Կորեկի հատիկներն ընտանի թռչունների համար լավագույն կերերից են։

Կորեկի ամենաարժեքավոր հատկությունը երաշտագիմացկունությունն է։ Նրա ժողովրդատնտեսական նշանակությունն զգալի բարձրանում է երաշտ տարիներին, երբ հա-

ցահատիկային կուլտուրաների բերքը խիստ  
ընկնում է, իսկ կորեկը բավականին մնձ  
բերք է տալիս:

Կորեկի դրական հատկություններից  
մեկն էլ նրա բարձր բերքատվությունն է,  
որը պայմանավորված է մշակության ճիշտ  
տեխնիկայով, որովհետև կորեկը խիստ զգա-  
յուն է աղբոտեխնիկայի բարելավման հան-  
դեպ:

Ցանքաշրջանառության մեջ կորեկը մեծ  
նշանակություն ունի. որպես շարքահերկ  
կուլտուրա, նա հողը մաքրում է մոլախո-  
տերից:

Կորեկը քիչ է ենթակա հիվանդություն-  
ներին և միասատուներին:

Առցեկը (*Panicum militaceum*)  
Եվ նրա սորտերը

Կորեկը պատկանում է հացարույսերի  
ընտանիքին։ Նրա ցողունն ուղիղ է, ար-  
մատը մինչև մեկ մետր խորանում է հողի  
մեջ։ Տերեները և ցողունը ծածկված են փա-  
փուկ մաղիկներով։ Ծաղիկներն ինքնափո-  
շոտվող են։ Հատիկը զանազան գույնի է լի-  
նում։ Սովորաբար կարմրահատ և դեղնահատ  
սորտերը մյուսներից բերբի են և ավելի լա-  
վորակ հատիկ են տալիս։

Կորեկի սորտերի ճիշտ ընտրությունը և  
ըստ ուայոնների նպատակահարմար բաշ-  
խումը շատ մեծ նշանակություն ունի բեր-  
քատվության բարձրացման և որակի բա-  
րելավման գործում։

Հուրանի տիպով կորեկը երեք հիմնական  
ձևեր ունի՝ ցրված, կտխված և խիտ։

Ցրված տիպի կորեկն ունի ավելի վա-

դահաս ձեւեր, որոնք մշակվում են կարճ  
աճեցողական սեղոն ունեցող շրջաններում:

Կախված և խիտ կորեկների այլատեսակ-  
ներն ավելի ուշահաս են և ավելի երաշտա-  
կայուն:

Կորեկի բազմաթիվ սորտերից առանձ-  
նացված են հետեւյալ բարձր բերքատուները՝  
Սարատովի 0853, Պոդոլի 24/273, Կրասնո-  
կուտի 19/273, Սարատովի 0742, Բեզենչու-  
կի 02: Տեղական լավ սորտեր են Պրոխաղ-  
նիի, Զամբեյտինի և այլն:

Առեկի վերաբերմունքը կիմայի  
եվ հողի հանդեպ

Վերաբերմունքը զերմուքյան հանդեպ:  
Կորեկը ջերմասեր կուլտուրա է. Նրա հա-  
ջող աճեցողության համար շատ ջերմու-  
թյուն է պահանջվում: Սերմերը նորմալ  
կերպով ծլում են, երբ հողը 10 սմ խորու-  
թյամբ տաքանում է մինչև  $12-15^{\circ}$  ըստ  
Ցելսիուսի: Դարնան և աշնան ցրտահարու-  
թյուններին կորեկը չի դիմանում: Նրա ա-  
ռանձին այլատեսակների աճեցողական շրջ-  
անը տեսում է 50-ից մինչև 100—120 օր:

Վերաբերմունքը խոնավության հանդեպ:  
Ինչպես վերն ասացինք, երաշտակայունու-  
թյունը կորեկի բնորոշ առանձնահատկու-  
թյունն է: Կորեկի սերմը ծլելու համար և  
հետագայում բույսն իր աճման պրոցեսում  
մոտավորապես 2 անգամ պակաս խոնավու-  
թյուն է պահանջում, քան մնացած հացա-  
հատիկային կուլառուրաները (բացի սոր-  
գոից): Զրի տեսական պակասության և բար-  
ձըր ջերմաստիճանի ազդեցության տակ  
կորեկը խողովակածե ոլորում է տերեները և  
մինչև 40 օր կարող է մնալ այդ դրությամբ:  
Խոնավության առկայության դեպքում այն  
վերակենդանանում է: Այդ նույն պայման-  
ներում, օրինակ, վարսակն արմատից չու-  
րանում է: Այս առանձնահատկությունների  
շնորհիվ կորեկն անբարեհաջող կլիմայական  
պայմաններում համեմատաբար պակաս է  
տուժում:

Կորեկն ընդունակություն ունի լավ օգ-  
տագործելու ամռան երկրորդ կեսին տեղա-  
ցող անձրեները, որոնք անօգուտ են անց-

**Նուև մյուս հացահատիկային՝ կուլտուրա-  
ների համար:**

Վերաբերմունքը հողի հանդեպ: Ամենա-  
բարձր բերքը կորեկը տալիս է սեահողե-  
րում, լավ է աճում նաև շագանակազույն  
հողերում: Պակաս հաջողությամբ չի աճում  
նաև կավախառն հողերում: Կորեկի համար  
պիտանի չեն ճահճացած և ծանր կավահո-  
ղերը:

### **Առեւկի բերքատվությունը**

Կորեկի բերքը մինչև 1939 թիվը ցածր  
էր նույնիսկ ամենանսղաստավոր տարինե-  
րին: Դա բացարկվում է դեպի այդ կուլ-  
տուրան ցուցաբերվող անհրաժեշտ ուշա-  
գըության բացակայությամբ:

ՍՍՌՄ Ժողկոմսովետի և Համ Կ(բ)Պ ԿԿ-ի  
«ՍՍՌՄ Հարավ-Արևելյան չորային ռայոն-  
ներում կայուն բերք ապահովելու միջոցա-  
ռութների մասին» որոշումից հետո սկսեցին  
կորեկին ավելի մեծ ուշագրություն դարձ-  
նել և արդեն 1940 թ. շատ մարզերում և  
ռայոններում կորեկը դարձավ ամենաբեր-

քատու հացահատիկային կուլտուրան, որի  
բերքը տատանվում էր հեկտարին 30-ից  
մինչև 70 ցենտներ հատիկ:

Մշակության ռացիոնալ ձևերով, ոսողում  
և պարարտացում կիրառելով՝ առանձին  
կոլխոզներ կարողացան ռեկորդային բերք  
ստանալ՝ հեկտարից մինչև 150—170 ցենտ-  
ներ հատիկ:

Կորեկի տեղը ցանքաւցանառության մեջ

Կորեկը խիստ պահանջկոտ է դաշտի մաք-  
րության վերաբերմամբ։ Նրա տեղը ցան-  
քաշը ջանառության մեջ շարքահերկ դաշտն  
է։ Կորեկի համար լավ նախորդողներ են  
թիթեռնածաղկավոր բույսերը, կարտոֆիլը,  
ճակնդեղը, արեածաղիկը և այլն։ Կորեկը  
բարձր բերք է տալիս խամ և խոպան հո-  
ղերում, ինչպես նաև խոտագաշտից հետո։  
Ինքը՝ կորեկը շատ լավ նախորդող է մի  
շարք կուլտուրաների համար։ Լայնաշար  
ցանքի դեպքում նա լավ նախորդող է դար-  
նանացան ցորենի և վիկ ու վարսակի հա-  
մատեղ ցանքի համար։

## Խոզանացան կորեկ

Կարճ անեցողական շրջանի (50—60 օր) շնորհիվ կորեկը մեծ հաջողությամբ մշակվում է որպես խոզանացան կուլտուրա և մեծ բերք է տալիս այն վայրերում, որտեղ ամռան երկրորդ կեսը բավականին տաք է:

Արարատյան գաշտավայրի բամբակացան շրջաններում՝ ոռոգվող տնտեսության պայմաններում, կորեկը որպես խոզանացան կուլտուրա վաղուց մշակվում է և տնտեսական մեծ նշանակություն ունի լրացուցիչ գյուղատնտեսական արտադրանք ստանալու գործում:

Կորեկն ապահովագրող կուլտուրա է, եթե մյուս հացահատիկները որևէ պատճառով մխասվում են, փոխարենը կորեկ են ցանում:

Խոզանացան կորեկի նշանակությունն առանձնապես մեծանում է այժմ՝ Հայրենական մեծ պատերազմի օրերին, երբ մեր առաջ խնդիր է գրված առավելագույն չափով ապահովել բանակը և երկիրը գյուղատնտեսական մթերքներով:

Բազմաթիվ տարիների փորձնական տը-  
վյալներով հաստատված է, որ խողանացան  
կորեկը մեծ բերք է տալիս: Դուզքենդի սոր-  
տահողամասում 1942 թ. օգոստոսի 3-ին  
ցանված կորեկը տվեց լավ բերք՝ մինչև 20  
ցենտներ մի հեկտարից, իսկ Երևան քաղա-  
քի պայմաններում, ՍՍՌՄ Գիտություն-  
ների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Բիո-  
լոգիական ինստիտուտի փորձնական հողա-  
մասում նույն թվի օգոստոսի 5-ին ցանած  
կորեկը՝ մինչև 25 ցենտներ մեկ հեկտարից՝  
մեծ չափով գերազանցելով դարնանը կա-  
տարած ցանքի բերքին:

### Հողի մշակույթունը

Կորեկի հողամասի մշակությունը պետք  
է սկսել աշնանից: Խոնավությունը հողի  
մեջ պահելու, ինչպես նաև մոլախոտերի  
դեմ պայքարելու համար՝ նախորդող կուլ-  
տուրայի բերքը հավաքելուն զուզընթաց՝  
հողամասը պետք է երեսվար անել 5—6 ամ  
խորությամբ: Աշնանը երեսվարած դաշտը  
հերկում են անպայման նախախոփիկ ու-

նեցող գութանով 22—25 սմ խորությամբ  
և այդ գրությամբ թողնում են մինչև գա-  
րուն:

Դաղ գալընանը, հենց որ դաշտ գուրս  
գալու հնարավորություն ստեղծվի, անհրա-  
ժեշտ է հողամասը մանր փխրեցնել խոնա-  
վությունը պահպանելու համար:

Այնուհետև, մոլախոտեր երեալու դեպ-  
քում անհրաժեշտ է հողը փխրեցնել թա-  
թավոր կուլտիվատորներով։ Ճանքից առաջ  
հողը պետք է նորից փխրեցնել՝ հետո առա-  
ջացած մոլախոտերը ոչնչացնելու համար։

Խորհուրդ է տրվում ցանքից առաջ հողը  
տափանել։ Վերջին գործողության միջոցով  
հողի մեջ խոնավություն է կուտակվում, և  
կորեկի սերմերի միահամուռ ծլման համար  
ավելի նորմալ պայմաններ են ստեղծվում։

Միության չորային և կիսաչորային ռա-  
յոններում բերքատվության բարձրացման  
գործում մեծ դեր է խաղում ձյան պահպա-  
նումը հողամասի վրա։

Խողանացան կորեկի բարձր և կայուն  
բերքի համար մղվող պայքարում վճռական

նշանակություն ունի հողի ժամանակին և  
ճիշտ կատարած մշակությունը՝ նախորդ  
կուլտուրայի բերքը հավաքելուց հետո ան-  
միջապես խոր (20—22 սմ) հերկ հետագա  
վոցխումով (դա կատարվում է մոտավորա-  
պես հուղիսի առաջին կեսին):

### Պարագագում

Կորեկի բերքատվությունը բարձրաց-  
նելու գործում վճռական նշանակություն  
ունի պարարտացումը, եթե այն կիրառվում  
է ագրոտիխնիկայի մյուս միջոցառությունի  
հետ միասին:

Կորեկի դաշտն աշնանը պետք է մտցնել  
գոմաղը կամ խառնազը, որպես հիմնական  
պարարտանյութ, հեկտարին 20—30 տոնն։  
Կորեկը լավ արդյունք է տալիս նաև ֆոս-  
ֆորական և կալիումական աղերով պա-  
րարտացնելու դեպքում։ Սուպերֆոսֆատ  
պետք է տալ հեկտարին 2,5—3,0 ցենտներ,  
իսկ աղոտական պարարտանյութեր՝ 2—2,5  
ցենտներ։

Խողանացան կորեկի բարձր բերք ստա-

նալու համար, բարձր ազրոտեխնիկա կիրաւութեան միասին, անհրաժեշտ է հողը հաշը ստացնել հանքային տեղական պարագանեան յութերով։ Արարատյան դաշտավայրի պայմաններում գոմազը պետք է հողին տալ նախորդ կուլտուրայի հիմնական հերկի ժամանակ, իսկ հանքային և այլ պարարտանյութերը մտցնել կորեկի համար հիմնական հերկ կատարելիս։

### Սերմացու

Սերմացուն պետք է սորտային և բարձրորակ լինի, ջանքի համար պետք է սերմերը ընտրել այնպիսի բույսերից, որոնք աճել են բարձր ազրոտեխնիկայի պայմաններում, բերքատու և երաշտի, հիվանդությունների ու ֆիսասառուների հանդեպ կայուն են եղել, և հատիկները չեն թափվել։

Առաջավոր կոլխոզները, բարձրորակ և միատեսակ սերմեր ստանալու համար, կոռեկի հասունանալու ժամանակ դեռևս դաշտում մասսայական ընտրություն են կատարում։

Նկատելի կերպով ավելի բարձր բերք  
են տալիս հուրանի վերին մասից ընտրած  
սերմերը։ Նրանք 3—4 օր ավելի շուտ են  
հասունանում, քան ստորին սերմերը, և ա-  
վելի խոշոր են ու ծանրաքաշ։ Փորձերը  
ցույց են տվել որ այդպիսի սերմերը 50  
տոկոսով բարձրացնում են բերքը։

Ցանքի համար ընտրած սերմերը մաք-  
րում են, տեսակավորում և ծլունակությունն  
ստուգում։

Կորեկի բերքատվությունը բարձրացնե-  
լու համար կարեոր պրիոր է յարովիզա-  
ցիան։ Այս պրիորն ապահովում է ծիլերի  
արագ և միահամուռ երեալը, արագացնում  
է հասունացումը և բարձրացնում բերքը։

Սերմերը թրջելու համար յուրաքանչյուր  
100 կիլոգրամ սերմին վերցնում են 26 լիտր  
ջուր երկու նվագ (առաջին նվագ՝ 16 լիտր  
և երկրորդ նվագ՝ 10 լիտր)։ Սերմի կույտի  
մեջ 7—10 օրվա ընթացքում պահպանվում  
է 18—20° ջերմություն։ Օրվա մեջ մի քանի  
անգամ սերմերը բահով խառնում են։ Ծլած

սերմերի թիվը ցանքի ժամանակ չպետք է  
անցնի 10—12 տոկոսից:

### Յանի ժամանակը

Կորեկն ուշ ցանվող բույս է: Լավ նաև  
խաղաղաստված և տաքացած հողում կա-  
տարած ցանքը կորեկի բարձր բերք ստա-  
նալու վճռական պայմաններից մեկն է:  
Կորեկի սերմերն սկսում են ծլել ջերմու-  
թյան 12—15°-ի ժամանակի:

Զտաքացած հողում վաղ ցանք կատարե-  
լու դեպքում սերմերը փառում են կամ, լավա-  
գույն դեպքում, սատացվում են նոսր, թույլ  
ծիլեր, որոնք շուտով կորչում են մոլախո-  
տերի մեջ և ոչնչանում:

Կորեկի ցանքի ժամկետներն ուսումնա-  
սիրող շատ փորձակայաններ գտնում են,  
որ ցանքի լավագույն ժամկետը մայիսի  
առաջին տասնօրյակն է: Սակայն պակաս  
չեն և այնպիսի դեպքեր, երբ նույնիսկ  
հունիսի վերջում ցանված կորեկը լավ բերք  
է տվել, բայց այդ ժամկետը հյուսիսային

ուայոնների համար սահման համարվել չե  
կարող:

Խոզանացան կորեկի ցանքի նորմալ  
ժամկետն է հուլիսի առաջին կեսը, երբ  
հացահատիկներն արդեն հավաքված և դաշ-  
տը նախապատրաստված է լինում ցանքի  
համար:

### Յանելի նորման

Սերմացուի քանակը կախված է գլխա-  
վորապես ցանքի եղանակից, շրջանի հո-  
գային-կլիմայական պայմաններից, սոր-  
տից և այլն:

Նոսր ցանքն ընդհանրապես նպաստում  
է ուժեղ թփակալմանը, և հատիկներն ան-  
համաչափ են հասունանում: Խիտ ցանքը  
պակասեցնում է բերքը, որովհետև բույսերը  
ճնշվում են: Սովորաբար, լայնաշար ցան-  
քերի գեղքում մի հեկտարին ցանում են  
10—15 կիլոգրամ, իսկ միապաղադ ցանքի  
գեղքում՝ 15—18 կիլոգրամ հատիկ:

### Յանի խորությունը

Յանքի նորմալ խորությունը համարվում է 3—4 սմ։ Այս խորության դեպքում ծիւլերը հեշտությամբ են հողի երես դուրս գալիս։

Նախացանքային սխալ մշակման պատճառով խիստ չորացած հողում սերմերը կարելի է ցանել մինչև 5—6 սմ խորությամբ։

### Յանի եղանակները

Կորեկն ամենաբարձր բերք տալիս է լայնաշար ցանքի դեպքում՝ միջջարքերը 45—50 սմ։ Այս տիպի ցանքը հնարավորություն է տալիս մշակումը կատարել ծիով ու տրակտորով և դաշտը մաքուր պահել (որ առանձնապես մեծ նշանակություն ունի կորեկի ծիլերի համար աճման առաջին շրջանում)։

Չորային պայմաններում լայնաշար ցանքը նպատակահարմար է կատարել միագիծ շարքերով։ Սա ազանովում է բարձր

բերքի ստացումը՝ մինչև 20—25 յենաներ  
մեկ հեկտարից:

Բավականաչափ խոնավության պայ-  
մաններում սովորաբար երկդիմ (ժաղավեն-  
ների միջև 45—60 սմ, շարքերի միջև 15 սմ)  
և եռագիծ (ժաղավենների միջև 60 սմ,  
շարքերի միջև 13—15 սմ) լայնաշար ցանք  
են կատարում: Վերջիններիս առավելու-  
թյունը միագիծ ժաղավեններով ցանքի  
հանդեպ այն է, որ միևնույն տարածության  
վրա ավելի մեծ թվով բույսեր են աճեց-  
վում, իսկ պակասությունը՝ որ դժվարու-  
թյուններ են ստեղծվում մեքենայացված  
մշակման համար:

Այսպիսի ցանք նպատակահարմար է  
կատարել մոլախոտերից ազատ հողերում:

Միջարքային տարածության լայնու-  
թյունը կախված է նաև տնտեսության ու-  
նեցած մշակման գործիքներից և մեքենա-  
ներից:

### Յանքի խնամքը

Ցանքի խնամքը գլխավորապես մոլա-  
խոտերը ոչնչացնելն է: Վճռական նշանա-

կություն ունի ցանքի մշակումը մանաւ-  
վանդ բույսի աճման առաջին շրջանում:

Կորեկն աչքի է ընկնում անհամաչափ  
դարդացմամբ: Սկզբում ծլումը շատ դան-  
դաղ է կատարվում, թփակալումը տեղի է  
ունենում 30 օր հետո (մինչդեռ վաղ հացա-  
հատիկների այդ ժամանակամիջոցը երկու  
անգամ կարձ է): Առաջին միջշարքային  
մշակումը կատարում են հենց որ շարքերը  
նշմարվում են (ցանքի 12—14-րդ օրը):  
Մշակումն ուշացնելու դեպքում մոլախո-  
տերն արագ աճում և խեղդում են կորեկի  
ծիլերը: Թփակալումից հետո կորեկն արագ  
է աճում և հեշտությամբ ծածկում է մո-  
լախոտերը, եթե վերջիններս երևան:

Միջշարքային մշակման համար կիրառ-  
վում են տրակտորային, ձիու կամ ձեռքի  
կուլտիվատորներ (շարքահերկ մեքենաներ)՝  
կտրող, բայց շուրջ չտվող թաթերով:

Կորեկի ծիլերը շատ զգայուն են հողով  
ծածկվելու հանդեպ, դա խանգարում է նը-  
րանց նորմալ զարգացմանը: Այս նպատակի  
համար միանգամայն ոլիտանի են XKR—C

մարկայի կուլտիվատորները, որոնք պրակտիկա մեծ նշանակություն ունեն կորեկի լայնաշար մշակման համար։ Այս մեքենայի գործող մասերն աղաս կարելի է հարմարեցնել տվյալ միջարքերի համար, նըանց միակողմանի թաթերը պաշտպանում են կորեկի երիտասարդ ծիլերը հողով ծածկվելուց։

Միջարքային մշակման հետ միաժամանակ պետք է քաղնան կատարել նաև շարքերի մեջ։

Երկրորդ միջարքային մշակումը պետք է կատարել թփակալման ժամանակ։ Այնուհետև այդ միջոցառումը, ինչպես նաև քաղնանը շարքերի մեջ, որպես անհրաժեշտ ազգութեոնարկում, պետք է կատարել հողն ամրանալու և մոլախոտերով ծածկվելու գեղաքում։ Միապաղաղ ցանքի դեպքում քաղնանը պետք է ձեռքով կատարել։

ՍՍՌՄ Ժողկոմսովետի և Համկ(բ)Պ Կե-ի որոշումը պարտադրում է կատարել ոչ պակաս, քան 2—3 մշակում ինչպես լայնաշար, նույնպես և միապաղաղ ցանքի դեպքում։

## Սնուցումը

Բարձր բերք ստանալու համար, բացի հողը լավ մշակելուց, անհրաժեշտ է նրա մեջ կուտակել բավարար քանակությամբ հեշտ յուրացվող սննդանյութեր:

Ժամանակին և ծիշտ սնուցումը թե հիմնական պարարտացման դեպքում և թե առանց այս վերջինի՝ պրակտիկայում միշտ էլ իրեն արդարացնում է:

Փորձերը ցույց են տվել որ կորեկը թփակալման և ծաղկելու ժամանակ մեծ քանակությամբ սննդանյութեր է վերցնում հողից: Անուցումը պետք է տալ բույսին հենց այդ ժամկետներին: Աճման ընթացքում երկու սնուցում տալն անհրաժեշտ է համարվում: Առաջին սնուցման դեպքում (թփակալման շրջանում) հանձնարարվում է հողի մեջ մտցնել հեկտարին 1,5 ցենտներ ամոնիում սուլֆատ, 2 ցենտներ սուլֆեր-ֆոսֆատ և 0,75 ցենտներ կալիումական աղ: Երկրորդ սնուցման ժամանակ պետք է հողին տալ հեկտարին 0,75 ցենտներ ամո-

Նիում սուլֆատ, 1,0 ցենտներ սուլֆերֆոս-  
ֆատ և 0,5 ցենտներ կալիումական աղ:

Եթե տնտեսությունն ունի տեղա-  
կան պարարտանյութեր, ապա հանքային  
պարարտանյութերը հաճախ փոխարինում  
էն նրանցով: Թուչնաղը տալիս էն հեկ-  
տարին 2—2,5 ցենտներ և մոխիր՝ 2—3  
ցենտներ: Երկրորդ սնուցման ժամանակ  
կարելի է տալ գրանից 25—30% պակաս:  
Կայն կերպով կիրառվում է նաև գոմաղբի  
հեղուկ:

Պարարտանյութը ցանկալի է տալ լուծ-  
ված վիճակում (1 մաս պարարտանյութին  
5—6 մաս ջուր), մանավանդ չորային շըլ-  
ջաններում: Որպես սնուցող գործիքներ  
կարելի է օգտագործել տրակտորային կուլ-  
տիվատորները և XKR—C ու YKC—M մար-  
կայի սնուցման գործիքները: Այդ մարկայի  
սնուցման գործիքներն այն առավելու-  
թյունն ունեն, որ նրանց բանող մասերն  
աղատ կարելի է հարմարեցնել միջարքե-  
րին: Այս նպատակի համար օգտագործում

Են նաև հատուկ հարմարանքներ ունեցող  
շարքացան մեջենան:

### ԱռԵԿԻ ՉՐԵԼ

Զնայած որ կորեկը բարձր-երաշտա-  
կայուն բույս է, այնուամենայնիվ խոնա-  
վության վերաբերմամբ զգայուն է և ամե-  
նաբարձր բերքը տալիս է ոռողման դեպ-  
քում:

Հատուկ փորձերը հաստատել են, որ կո-  
րեկն առանձնապես շատ ջուր է պահան-  
ջում խողովակ գցելու և հուրան տալու ժա-  
մանակ:

Բազմաթիվ փորձեր ցույց են տվել, որ  
խողանացան կորեկը ցանքից հետո պար-  
տադիր կերպով պետք է ջրել։ Հետեւյալ  
ջուրը պետք է տալ խողովակ գցելու և հու-  
րան տալու ժամանակ։

### ԱռԵԿԻ ԲԵՐՅԱՀԱՎԱԲՐ

Կորեկն անհամաչափ է հասունանում։  
Սկզբում հասունանում են ամենաբարձր

հարկի հուրանները, հետո՝ միջին և, վերապես, ստորին:

Սովորաբար նկատվում է, որ երբ հուրանի վերին մասն արգեն հասունացել է, միջինը դեռ նոր է հասունանում, իսկ ստորինը համարյա կանաչ է:

Սպասել, որ բոլոր հուրանները հասունանան, չի կարելի: Կորեկը հավաքում են այն ժամանակ, երբ բույսերի մեծ մասի վրա հուրանների վերին մասերի սերմերը հասունացած են: Ինչպես արգեն վերեռում ասացինք, այդ սերմերն ավելի խոշոր և ծանրաքաշ են:

Մեծ տարածությունների վրա կորեկը հավաքել հանձնարարվում է կոմբայնով, այս դեպքում բերքի կորուստ համարյա չի լինում: Կորեկը հավաքում են նաև հնձող ավելի պարզ մեքենաներով:

Կորեկի հիվանդուրյուններ  
Եվ վնասառուններ

Կորեկը հիվանդությունների և զնամատունների քիչ է ենթակա: Կորեկին որոշ

վնաս է պատճառում մրիկլը: Պայքարն է՝  
սերմերի ախտահանումը:

Միջատներից կորեկին վնասում է լա-  
րառդղը: Պայքարի մատչելի ձևն է՝ հողի  
խնամքով և ժամանակին մշակությունը:

---

Թովանդակություն

Եջ

<b>Առաջաբան</b>	3
<b>Կորեկը (Panicum miliaceum) և նրա սորտերը</b>	5
<b>Կորեկի վերաբերմունքը կլիմայի և հողի հանդեպ</b>	6
<b>Կորեկի բերքատվությունը</b>	8
<b>Կորեկի տեղը ցանքաշրջանառության մեջ</b>	9
<b>Խողանացան կորեկ</b>	10
<b>Հողի մշակությունը</b>	11
<b>Պարաբատացում</b>	13
<b>Սերմացու</b>	14
<b>Ցանքի ժամանակը</b>	16
<b>Ցանքի նորման</b>	17
<b>Ցանքի խորությունը</b>	18
<b>Ցանքի եղանակները</b>	18
<b>Ցանքի խնամքը</b>	19
<b>Մնուցումը</b>	22
<b>Կորեկի ջրելլը</b>	24
<b>Կորեկի բերքահավաքը</b>	24
<b>Կորեկի հիվանդությունները և պահատուները</b>	25



ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ա. Խաչատրյան — Բանջարանոցային  
բույսերի աճեցումը Երևանի պայման-  
ներում . . . . . 10 ռ.
2. Տ. Ա. Տեր-Մահակյան — Կարտոֆիլի  
կուլտուրան Արարատյան դաշտավայրում 6 ռ.
3. Ա. Ա. Ռաֆայելյան — Կորեկ . . 1 ռ. 50 կ.
4. Հ. Ա. Բաղալյան — Ինչպես որոշել քա-  
նի օրական է Լուսինը . . . . . 5 ռ. 50 կ.
5. Գ. Դ. Յարոշենկո — Մասուրը որպես  
վիտամինի հարուստ աղբյուր . . . . . 2 ռ.
6. Գ. Դ. Յարոշենկո — Զեմ և պատեղ՝  
անտառային հոնից, Յուղալի մածուկ հա-  
ճարենու պտուղներից . . . . . 2 ռ.
7. Ա. Գ. Արտրատյան — Անտառայդի-  
ներ . . . . . . . . . . . 2 ռ. 50 կ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

1. Ա. Ա. Ռաֆայելյան — Եղիպտացորեն:
2. Ա. Ա. Ռաֆայելյան — Հնդկեն բույսերի  
կուլտուրան Երևանի հողային պայմաններում:

3. Ա. Ա. Բ ի կ տ ե լ — Հայաստանի թունավոր օձերը:
4. Հ. Հ. Ս ե պ ե տ չ յ ա ն — Հայաստանի ինքնաբույս  
վալերիանը և նրա մշակությունը:
5. Պ. Ա. Պ ո ղ ո ս ո վ — Երևանի հողերի պա-  
րագայումը:
6. Վ. Վ. Ա զ ա բ ա բ յ ա ն — Երևանի հողերի պա-  
րագայումը:
7. Ե. Ե. Ա ս լ ա ն յ ա ն — Զամչի պատրաստումը խա-  
ղողի տեղական սորտերից:



Армянский Филиал Академии Наук СССР  
Сектор Почвоведения

---

Естественно-научная популярная серия

А. С. РАФАЕЛЯН

П Р О С О

(На армянском яз.)


Издание Армфан. Ереван, 1943 г.

Գ.Յ 02590, պատվեր 520, տիրաժ 1000.

Ստորագրված է տպելու 31 հունիսի 1943 թ.

---

ՆԳԺԿ Վարչչոնտրաժնի տպարան, Երևան.



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0039689

(054)

ԳԻՒԼ 1 Ռ. 50 Կ.

